

<Առջևում ՏԻՄ ընտրություններն են. մասնագիտական դասընթաց Մարտունիում>,
<Ամարաս> պաշտոնաթերթ, N18 առ 30.09.2013

ԱՌՋԵՎՈՒՄ ՏԻՄ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԵՆ. ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ ՄԱՐՏՈՒՆԻՈՒՄ

ԱՐՄԻՆԵ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Մեպտեմբերի 11-ին, Մարտունու մշակույթի և երիտասարդության կենտրոնում, Մարտունու, Մաճկալաշենի, Ղ. Ճարտարի, Վազգենաշենի և Գիշու համայնքների ընտրական հանձնաժողովների անդամության թեկնածուների համար կազմակերպվեց մասնագիտական դասընթաց, որին մասնակցում էին դիմում ներկայացրած շրջանի շուրջ 79 քաղաքացիներ:

Դասընթացի անցկացման համար շրջկենտրոն էին ժամանել ԼՂՀ կենտրոնական հանձնաժողովի (ԿԸՀ) նախագահ Սրբուհի Արզումանյանը, ԿԸՀ նախագահի տեղակալ Եղիշե Արզումանյանը, ԿՀԸ քարտուղար Ռայա Նազարյանը: Ներկա էր նաև Մարտունու տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահ Հայկ Պետրոսյանը:

Դասընթացը, որը վարեց ԼՂՀ ԿԸՀ նախագահ Սրբուհի Արզումանյանը, ընթացավ երեք փուլով՝ ընտրական գործընթացի վերաբերյալ բացատրական աշխատանք, տեսահոլովակի դիտում և ստուգարքի ընդունում:

Բացելով դասընթացը՝ Ս.Արզումանյանը հայտնեց, որ այցի նպատակը դասընթացի կազմակերպման պրակտիկայում հանդիպող որոշակի բացերի շտկումն ու գործող ընթացակարգերի կատարելագործումն է, 2013թ. հոկտեմբերի 13-ին կայանալիք տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների և հետագա երեք տարիների ընթացքում կայանալիք ընտրությունների նախապատրաստական աշխատանքները կազմակերպված ու բարձր մակարդակով իրականացնելը:

Ս.Արզումանյանը ներկայացրեց ընտրական գործընթացի վերաբերյալ կենտրոնական հանձնաժողովի վերաբերյալ դիրքորոշումները:

-Ընտրական գործընթացում ամենակարևոր խնդիրը բոլորիս համար պետք է լինի մեր հասարակության մեջ առողջ բարոյահոգեբանական մթնոլորտի պահպանումը:

Օբյեկտիվ է, որ առանձնապես մրցակցային ընտրությունների ժամանակ բնակչության շրջանում մթնոլորտի ակտիվացում արձանագրվի: Սակայն դա պետք է տեղի ունենա միայն ու միայն առողջ շփումների ձևով, զերծ կոնֆլիկտներից: Բհարկե, ընտրական գործընթացի բոլոր մասնակիցներն այս գիտակցումով պետք է մոտենան ցանկացած ընտրության ու առաջին հերթին, բացի թեկնածուներից ու նրանց մտերիմներից, այստեղ անելիքներ ունենք մենք՝ ընտրական եռաստիճան համակարգի բոլոր հանձնաժողովականներս, այն է՝ լավագույնս տիրապետել ընտրությունների կազմակերպման թե իրավական և թե տեխնիկական առանձնահատկություններին, և դրանք կիրառել պրակտիկայում,- նշեց Ս. Արզումանյանը:

ԿԸՀ-ի նախագահը մասնակիցներին հիշեցրեց, թե որ դեպքում քաղաքացին իրավունք ունի և որ դեպքում իրավունք չունի մասնակցելու ընտրություններին, ովքեր իրավունք ունեն հանդես գալու վստահված անձանց և դիտորդներ դերերում:

Ս.Արզումանյանը խոսեց քվեարկության գաղտնիության ապահովման անհրաժեշտության, ընտրացուցակների, ընտրական հանձնաժողովների կազմավորման հիմունքների, ժամկետների, նախընտրական քարոզչության, ինչպես նաև վստահված անձանց, դիտորդների, ՋԼՄ-րի ներկայացուցիչների կարգավիճակի, իրավունքների, պարտականությունների և գործունեության երաշխիքների շուրջ:

Ընտրական հանձնաժողովների անդամների, անդամության թեկնածուների համար ԼՂՀ շրջաններում մասնագիտական դասընթացների կազմակերպման նախապատրաստական աշխատանքների մասին տեղեկատվություն ներկայացրեց ԼՂՀ ԿԸՀ նախահագի տեղակալ Ե. Արզումանյանը:

Հայտնվեց, որ մասնագիտական դասընթացները կանցկացվեն երկու փուլով, որի ուղղությամբ տարածքային ընտրական հանձնաժողովների կողմից զգալի աշխատանք է տարվում:

Խոսվեց տարածքային ընտրական հանձնաժողովի կողմից տարածքային ընտրական հանձնաժողովների կազմավորման կարգի, հանձնաժողովի անդամների լիազորությունների մասին:

Տարածքային ընտրական հանձնաժողովում քվեարկության կազմակերպման, նախապատրաստման, քվեաթերթիկների, ընտրական հանձնաժողովների կնիքների, քվեատուփի, ձերբակալվածների և կալանքի տակ գտնվող քաղաքացիների քվեարկության կազմակերպման և հարակից հարցերի շուրջ պարզաբանումներ տվեց ԼՂՀ ԿԸՀ քարտուղար Ռ.Նազարյանը:

Նրա խոսքերով՝ մի փոքր բացթողումը կարող է լուրջ խնդիրներ առաջացնել:

Դասընթացի երկրորդ փուլում ընտրական գործընթացի վերաբերյալ ցուցադրվեց տեսահոլովակ, որում ընտրական ողջ գործընթացը ճիշտ ու պատշաճ մակարդակով կազմակերպելուց բացի կարևորվեց նաև ոստիկանության հետ ընտրական հանձնաժողովի սերտ համագործակցության, ընտրացուցակների ճշտման, քվեարկության օրը հասարակական կարգի ապահովման անհրաժեշտությունը:

Երրորդ փուլում կազմակերպվեց ստուգարք, որը հանձնեց 73 քաղաքացի, ովքեր հետագայում կստանան ընտրական հանձնաժողովներում ընդգրկվելու իրավունքի վկայականներ:

Ամփոփելով ստուգարքի արդյունքները՝ Ս. Արզումանյանը նշեց, որ մասնագիտական դասընթացը ծառայեց իր նպատակին: